ՈԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Նորայր Նորիկյան

Բանալի բառեր՝ ռազմական քաղաքականություն, անվտանգություն, զինված ուժեր, բարեփոխումներ, պատերազմական գործողություններ, կառավարման համակարգ, մարտունակություն:

Հարավկովկասյան տարածաշրջանում միջէթնիկական և միջպետական հակասությունները և մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությունը խոչընդոտում են տարածաշրջանի պետությունների միջև տնտեսական և քաղաքական կայունության ձևավորմանն ու փոխհարաբերությունների զարգացմանը (Հայաստանի և Ադրբեջանի պարագայում՝ հաստատմանը): Միաժամանակ երկարամյա լարվածությունը, դիվերսիոն հետախուզական և հատուկ ստորաբաժանումների շարունակական գործողությունները վտանգ են ստեղծում տարածաշրջանում նոր պատերազմի զարգացումների առումով:

Երկրի ռազմաքաղաքական գործունեությունը սոցիալ-քաղաքական գործունեության այն տարատեսակն է, որն անմիջականորեն և ուղղակի կապված է ռազմական քաղաքականության սուբյեկտի նպատակներին հասնելու համար բոլոր անհրաժեշտ միջոցների նախապատրաստման ու կիրառման հետ: Տվյալ տեսակի գործունեության մեջ ռազմական բաղադրիչի առկայությունը այն բնութագրում է զինված միջոցների կիրառման տեսակետից, իսկ քաղաքական բնույթը բացահայտում է ռազմական քաղաքականության սոցիալական բնույթը: Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության ամբողջ համակարգը հիմնականում ձևավորվում, գործարկվում ու զարգացվում է ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգի վրա ազգային շահերին համապատասխանող ազդեցություն գործելու նպատակով:

Ներկայումս Հայաստանում անցկացվող ժողովրդավարական և կառավարչական բարեփոխումները, փոփոխված տնտեսական հնարավորությունները, նյութական, ժողովրդագրական և այլ պաշարների առկա մակարդակը թելադրում են պետության կողմից ռազմական ոլորտի քաղաքականության նոր սկզբունքների ու մեթոդների մշակման, կիրառման ու կատարելագործման անհրաժեշտություն, զինված ուժերի գործունեության և զինվորական ծառայության քաղաքական-իրավական հիմքերի անընդհատ զարգացում: Ռազմական քաղաքականության հայեցակարգային մասը ապահովում է պաշտպանության բնագավառի կառավարական մարմինը, իսկ գործնական մասը՝ զինված ուժերի կառավարման կենտրոնական մարմինը (գլխավոր շտաբը), որը հետադարձ գործառութային կապերի շրջանակներում և իր իրավասության սահմաններում մասնակցում է նաև ռազմական քաղաքականության հայեցակարգային բաժինների փորձաքննության ապահովմանը[1]:

Հայ հասարակությունը, անկախությունից ի վեր պայքարում է մրցունակ տնտեսություն, ապահով պաշտպանական համակարգ և հավասարակշռված արտաքին քաղաքականություն կառուցելու համար, որի արդյունավետության առաջնային գրավականը նորմատիվային (իրավական) ու հայեցակարգային (քաղաքական) հիմքերի ա-

* Հոդվածն ընդունվել է 08.01.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 17.01.20:

պահովումը, առանց որի վերը թվարկված բոլոր նպատակները մեղմ ասած անիրականանալի են:

ՀՀ իրավական համակարգի ձևավորման սկիզբը դրվել է 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեի անցկացմամբ և սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհրդի կողմից անկախության հռչակմամբ[2]: Իրավական համակարգը հնարավորություն տվեց անկախ պետականության պայմաններում ձևավորելու մարդու իրավունքները, ազատությունները, օրինական շահերն ու բարեկեցությունը երաշխավորող ինքնուրույն, կայուն պետաշինական կառավարչական համակարգ՝ հիմնված օրենսդրական և հայեցակարգային կարգավորումների վրա:

Ընդհանուր առմամբ, պետական և հասարակական կյանքի իրավական համակարգի ամրապնդման տեսությունը պահանջում է իրավունքի և դրա արտահայտման ձևի՝ օրենսդրության հետ իրավունքի հարաբերակցության հետազոտում: ՀՀ իրավական համակարգն իր ձևով և կառուցվածքով ռոմանագերմանական է, և իրավունքի կենսագործման գործընթացն անցնում է մի քանի փուլ: Առաջին փուլում իրականացվում է իրավունքի ամրագրում Սահմանադրության մեջ՝ դրան սահմանադրական նորմատիվ ձև տալու միջոցով: Երկրորդ փուլում օրենքը, լինելով իրավունքի օբյեկտիվ որակների արտահայտման ձև, կոնկրետացնում է վարքագծային և այլ կատարողական պահանջները: Երրորդ փուլը իրավունքի կենսագործման, դրան նորմատիվ ձև տալու ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունն է, որը որպես գործընթաց որոշակիացման ձևով կենսագործում է Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրված իրավունքը[3]:

Հայաստանի պաշտպանության ոլորտի և ռազմական քաղաքականության ապահովման օրենսդրական զարգացումները կարելի է բաժանել հաջորդական մի շարք փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1990-1997 թ.թ., երբ ԽՍՀՄ որոշ իրավական ակտեր մեխանիկորեն արտացոլվեցին նորանկախ պետության օրենսդրության մեջ, ինչպես նաև առաջին անգամ փորձ արվեց կարգավորելու նոր կազմավորվող պաշտպանական համակարգի իրավահարաբերությունները: Երկրորդ փուլը սկսվում է 1997 թ. և ավարտվում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով: Երրորդ փուլը տևում է նշված սահմանադրական փոփոխություններից մինչև 2007-2008 թ.թ., երբ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները հիմք հանդիսացան ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման և օրենսդրական բարեփոխումների նախաձեռնման համար[4]: Որպես չորրորդ փուլ՝ կարելի է առանձնացնել 2008թ.-ից մինչև 2015-2018 թվականները, երբ ընդհանուր պաշտպանական բարեփոխումներին համապատասխան և պաշտպանության համակարգի ռազմավարական վերանայման ծրագրերին համահունչ կատարելագործվում էր ոլորտի նորմատիվ իրավական հիմքը, զարգանում էր իրավահարաբերությունների կանոնակարգման մակարդակն ու մշակույթը: Այս փուլի շարունակությամբ են դրսևորվում արդի փուլում (կարելի է առանձնացնել որպես հինգերորդ փուլ) ակտիվորեն մշակվող և իրականացվող Հայաստանի խորհրդարանական կառավարման ձևին անցնելու կապակցությամբ երկրի պաշտպանության համակարգի օրենսդրության արմատական վերափոխումները՝ ի կատարումն 2015 թվականին ընդունված նոր Սահմանադրության համապատասխան պահանջների:

Ինչպես անվտանգության ընդհանուր քաղաքականությունը, այնպես էլ ոլորտային ուղղությունների աշխատանքները ամրագրվում են այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են կառավարության ծրագիր, անվտանգության ռազմավարություն, ռազմական դոկտրին և մյուս ոլորտներին վերաբերող հայեցակարգային փաստաթղթերը, որոնցում ռիսկերի գնահատման հիման վրա սահմանում են անվտանգության տարբեր ոլորտների մարմինների հետաքրքրությունները և առաջնային խնդիրները: Ռազմա-

վարական փաստաթղթերը հետագա բարեփոխումների համար ստեղծում են քաղաքական դաշտ և հիմք են ծառայում գործադիր մարմինների կողմից ծրագրային միջոցառումների պլանավորման ու իրականացման համար:

Պետության ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգում առանձնացվում են ներքին և արտաքին (միջազգային) ոլորտները: Պետության ռազմական քաղաքականության վրա դրանց ազդեցությունը միանշանակ չէ. եթե ներքին ռազմաքաղաքական հարաբերություններով պայմանավորվում է քաղաքականության սոցիալ-իրավական էությունը, ապա միջազգային հարաբերությունները որոշում են զինված միջոցներով քաղաքական նպատակներին հասնելու այս կամ այն ձևի ու մեթոդի կիրառելիության կոնկրետ սահմանները: Փաստորեն, ելնելով ռազմաքաղաքական հարաբերությունների երկու փոխկապակցված համակարգերի (արտաքին և ներքին) առկայության հանգամանքից՝ բովանդակային առումով տարբերվում են պետության ռազմական քաղաքականության երկու կողմերը՝ արտաքին ու ներքին:

Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության ընդհանուր ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները ներկայացվել են դեռևս ՀՀ նախագահի՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված ազգային անվտանգության ռազմավարությունում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է, որն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով[5]: Ռազմավարությունը սահմանում է ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, ինչպես նաև դրանց դեմ ուղղված սպառնալիքները: Փաստաթղթում արտացոլված է նաև ՀՀ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդրի լուծման հարցում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը միտված է պետության և հասարակության կայուն զարգացումն ապահովելուն ներքին և արտաքին սպառնալիքների կանխման ու դրանց հետևանքների վերացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության և ռազմաքաղաքական հիմնադրույթները, պաշտպանական ռազմավարությունը, ռազմական անվտանգության ապահովման համակարգը, ինչպես նաև պետական մարմինների՝ ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գործունեության հայեցակարգային հիմնադրույթները սահմանվում են ՀՀ Նախագահի՝ 2007թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում[6]: Վերջինս պաշտպանական բնույթի փաստաթուղթ է և պետության ռազմական անվտանգության ապահովմանն ուղղված ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերի համախումբն է: Անկասկած, երկրի ներքին (ազգային) և արտաքին անվտանգության ապահովման համակարգում ռազմական անվտանգությունը պահպանում է իր առանձնացված դերակատարությունը: Միևնույն ժամանակ սահմանվել է նաև, որ ռազմական դոկտրինի դրույթները կարող են փոփոխվել՝ կախված ռազմաքաղաքական իրադրությունից, ռազմական սպառնալիքների ու մարտահրավերների բնույթից, ռազմական անվտանգության համակարգի ապահովման համար անհրաժեշտ այլ գործոններից:

Հարկ է նաև ընդգծել, որ համաձայն նշված փաստաթղթերի բովանդակային մեկնաբանության՝ դրանցում ներառված պաշտոնական դիրքորոշումներն ու սզկբունքային մոտեցումները նախանշված են եղել մինչև 2015 թվականը, որից հետո այդ փաստաթղթերը պետք է լրամշակվեին: Հաշվի առնելով, որ 2015 թվականի սահմանադրա-

կան բարեփոխումների արդյունքում Հայաստանը անցում կատարեց խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելին, հետևաբար հանրապետությունում իրականացվեցին ծավալային ու բովանդակային փոփոխություններ ռազմական անվտանգության համակարգում և դրա շրջանակներում իրականացվող ռազմական քաղաքականության առումով, անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի վերանայման աշխատանքները նախաձեռնվեցին Սահմանադրությունից բխող համապատասխան օրենսդրական հիմքերի ընդունումից կամ գործող օրենքներում փոփոխություններ կատարելուց հետո, մասնավորապես ընդունվեցին «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»[7], «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին»[8], «Պաշտպանության մասին»[9], «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»[10] և մի շարք օրենքներ:

Նշված նորմատիվային կարգավորումներից հետո ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց ազգային անվտանգության ռազմավարության մշակման միջգերատեսչական հանձնախումբ՝ նույն որոշմամբ հաստատելով հանձնախմբի անհատական կազմը և գործունեության կարգը: Մասնավորապես, տվյալ որոշման համաձայն՝ ազգային անվտանգության ռազմավարության մշակման նպատակով Անվտանգության խորհրդի քարտուղարի ղեկավարության ներքո ստեղծվում է ազգային անվտանգության ռազմավարության մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնախումբ, որի անդամներն են Կառավարության անդամները (բացառությամբ ՀՀ վարչապետի և փոխվարչապետերի), ԱԱԾ տնօրենը, ոստիկանության պետը, ՀՈՒ ԳՇ պետը, ՊԵԿ նախագահը, ԱԺ արտաքին հարաբերությունների ու Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովների նախագահները, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը, ՊԿԾ պետը, ԿԲ նախագահը, ԳԱԱ նախագահը, ՀՀ ԱԽ գրասենյակի ներկայացուցիչը (հանձնախմբի քարտուղար): Անվտանգության խորհրդի քարտուղարին հանձնարարվել է Ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը մեկ տարվա ընթացքում ներկայացնել Անվտանգության խորհրդի հավանությանը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու համար[11]: Միջգերատեսչական հանձնախումբը պարբերաբար հրավիրում է նիստեր և քննարկումներ՝ փուլային տարբերակով ամփոփելու կատարված ընթացիկ աշխատանքներն ու հստակեցնելու նախատեսվող միջոցառումները[12]:

Ռազմական քաղաքականության և դրա շրջանակներում իրականացվող ծրագրային գործառնության հայեցակարգային ապահովման համատեքստում կարևոր է նաև ընդգծել գործադիր իշխանության մարմնի գործունեության կարգավորումները: Այսպես, ներկա ժամանակահատվածի համար ընդունված և ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի № 65-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը» սահմանում է առաջիկա հինգ տարիների համար ՀՀ գործադիր մարմինների գործունեության հիմնարար ուղենիշները, այդպիսով, ըստ էության, լինելով իշխող քաղաքական ուժի երկարաժամկետ տեսլականը կամ այսպես կոչված «Մեծ ռազմավարությունը»[13]: Նշված ծրագրում որպես պաշտպանության ոլորտի և զինված ուժերի ընթացիկ գործունեության ու զարգացման երկու առանցքային սկզբունքներ են հռչակվել պատրաստականության բարձրացումը և մարդկանց նկատմամբ հոգածության ավելացումը: Թեև բառացիորեն ամրագրված չէ կառավարության տեսլականում, փաստաթղթի՝ ռազմական քաղաքականությանը վերաբերող հատվածում կարմիր թելով անցնում է նաև երրորդ հիմնարար սկզբունքի գաղափարը, այն է՝ պաշտպանության ոլորտի ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացումը: Այս համատեքստում հարկ է ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ եթե պատրաստականություն ասելով հասկացվում է ներկա աշխարհաքաղաքական ու անվտանգային զարգացումների պայմաններում պատերազմին պատրաստ լինելու մակարդակը, ապա ինստիտուցիոնալ արդյունավետությունը կոչված է երաշխավորելու հնարավոր

պատերազմների կամ ռազմական գործողությունների համար բավարար կարողություններ գեներացնելու պաշտպանական համակարգի ունակությունը:

Կառավարության ծրագրի գործնական կատարումն ապահովելու և մշտադիտարկելու նպատակով կառավարության 2019թ. մայիսի 16-ի № 650 որոշմամբ հաստատվել է կառավարության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը, որտեղ նշված երեք գլխավոր սկզբունքների կիրարկումն ապահովող գործնական քայլերը սահմանված են կոնկրետ նպատակների, դրանք սպասարկող միջոցառումների, ակնկալվող արդյունքների և ժամկետների տեսքով[14]: Բացի այդ ՀՀ կառավարության տվյալ ծրագիրը՝ որպես քաղաքական փաստաթուղթ, պաշտպանական համակարգի հնգամյա զարգացման համար սահմանել է բավականին բարձր նշաձող, որին հասնելու համար նախատեսված է նաև պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՈՎ) գործընթացի անցկացում:

Ռազմական քաղաքականության ներքին բաղադրիչի ապահովման համատեքստում հարկ է համառոտ անդրադառնալ քննարկվող սկզբունքների շրջանակներում ընդունված և իրագործված (կամ ընթացքի մեջ գտնվող) ծրագրային միջոցառումներին: Մասնավորապես, այդ սկզբունքներից մեկի՝ պատրաստականության բարձրացմանն ուղղված միջոցառումները հիմնականում համընկնում են ՀՀ զինված ուժերի 2018-2024թ.թ. արդիականացման ծրագրի[15] և սպառազինության ու ռազմական տեխնիկայի 2018-2024թ.թ. զարգացման պետական ծրագրի համապատասխան դրույթների[16] հետ:

Ինստիտուցիոնալ արդյունավետության և անձնակազմի նկատմամբ հոգածության բարձրացմանը միտված երկու սկզբունքների շրջանակներում կարելի է առանձնացնել հետևյալ աշխատանքների հետևյալ ենթաոլորտային ուղղությունները. զինծառայողների, պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանություն, նյութատեխնիկական ապահովում և կապիտալ շինարարություն, բարեվարքության, զինված ուժերի անձնակազմի կարգապահության և բանակում մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդում, տեխնիկական ապահովման կատարելագործում և զինված ուժերի՝ սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրում, անձնակազմի կառավարման, կրթության և պատրաստության ոլորտների բարեփոխումների իրականացում, հանրային իրազեկման, թափանցիկության և հասարակական վստահության ամրապնդում, աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության և ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրացում, հավանական հակառակորդի տեղեկատվաքարոզչական ազդեցության դեմ պայքարի ուժգնացում և մի շարք այլ ուղղություններ:

Ռազմական քաղաքականության արտաքին բաղադրիչի շրջանակներում միջազգային համագործակցության և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ աշխատանքները նպատակաուղղված են ՀՀ միջազգային ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանը և զինված ուժերի զարգացմանը: Հիմնական խնդիրներ են բնորոշվում ԼՂ հակամարտության ռազմական ասպեկտների մասին միջազգային իրազեկվածության բարձրացումը, ռազմական համագործակցության պայմանագրահիրավական դաշտի ընդլայնումը և կարևորագույն ուղղությունների խորացումը, ինչպես նաև համագործակցության հետագա ծառայեցումը զինված ուժերի զարգացմանը՝ ռազմատեխնիկական, ռազմարդյունաբերության, խաղաղապահության, փոխգործունակության և վերափոխումների ոլորտների շեշտադրմամբ: Հայաստանը հետևողականորեն շարունակում է հետամուտ լինել հավաքական անվտանգության կառուցակարգերի իրագործմանը՝ փոխադարձ դաշնակցային պարտավորությունների կատարման շրջանակներում:

Ռազմական քաղաքականության և ռազմական անվտանգության ապահովման համակարգում կարևոր դեր է հատկացվում նաև դիվանագիտությանը, այդ թվում՝ ռազմական դիվանագիտությանը, որի առաջնահերթ խնդիրն է ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ նվազագույն ուժերով երկրի պաշտպանությունն ապահովելու համար՝ ունենալով հնարավորինս շատ դաշնակիցներ և քիչ հավանական հակառակորդներ[17]: Հնարավոր ռազմական սպառնալիքները կանխելու գործում կարևոր նշանակություն է ստանում երկկողմանի և բազմակողմանի դաշնակցային փոխգործակցությունը: Ուստի ՀՀ ԶՈՒ կարևոր խնդիրներից մեկն է երկրի շահերին համապատասխանող և ռազմական անվտանգությունը, ինչպես նաև միջազգային կայունությունն ապահովող տարածաշրջանային ուժերի հաշվեկշռի ձևավորման նպաստելը: Այդ ուղղությամբ իրականացվում են գործակցության միջոցառումներ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Ֆրանսիայի, Վրաստանի, Բելառուսի Լեհաստանի, Կիպրոսի, Չեխիայի, Լիբանանի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Հորդանանի և մի շարք այլ երկրների հետ, ինչպես նաև Հայաստանի մասնակցությունն ու ներգրավվածությունը ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի ձևաչափերով ծրագրային միջոցառումներին:

Որպես ամփոփում կարելի է ընդգծել, որ աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների ներկա փուլում Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության, զինված ուժերի և ռազմական անվտանգության համակարգի զարգացման հիմնական գործոններն են պետության տնտեսական հնարավորությունները, ժողովրդագրությունը, տարածքի մակերեսը, ինչպես նաև ռազմական արվեստի միտումները: Ռազմական քաղաքականության հայեցակարգային կարգավորումների համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ուժային եղանակով լուծելու համար զինված ուժերը, տնտեսությունն ու հասարակությունը հետևողականորեն նախապատրաստում է պատերազմի, և այդ նպատակով իր ռազմավարական փաստաթղթերում ամրագրված է «տարածքային ամբողջականությունը վերականգնելու» դրույթը: Հետևաբար, ՀՀ ռազմական քաղաքականության հիմնադրույթների մշակումն ու իրականացումը պետք է բավարարի ժամանակի պահանջներին, արձագանքի պաշտպանական-անվտանգային իրավիճակի փոփոխությանը և համարժեք լինի զինված ուժերի համար անհրաժեշտ առաջնահերթություններին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տ՛ես Քոթանջյան Հ.Ս., «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք // Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Երևան, 2009, էջ 86:
2. Տ՛ես ՀՀ Գերագույն խորհրդի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» որոշում, ՀՀ ԳԽՏ 1991.09.30/18(998), 23.09.1991, https://www.arlis.am/
3. Տ՛ես Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2016, էջ 12-13 :
4. Տ՛ես Նազարյան Ա.Ս., Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշի-

նության արդի փուլում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հմ. 2-3 (56-57), էջ 37-38:

5. Տ՛ես ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, https://www.arlis.am/
6. Տ՛ես ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՆՀ-308-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 07. 01.2008, https://www.arlis.am/
7. Տ՛ես «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.30/25 (1383), 30.03.2018, http://www.arlis.am
8. Տ՛ես «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), 07.03.2018, http://www.arlis.am
9. Տ՛ես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), 29.11.2017, http://www.arlis.am
10. Տ՛ես «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), 29.11.2017, http://www.arlis.am
11. Տ՛ես ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակման միջգերատեսչական հանձնախումբ ստեղծելու, հանձնախմբի կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 935-Ա որոշում, https://www.arlis.am/
12. Տ՛ես, օրինակ, Տեղի ունեցավ Ազգային անվտանգության ռազմավարության մշակման միջգերատեսչական հանձնախմբի հերթական նիստը, ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակ, 28.10.2019, http://seco.am/information/press_releases/271?lang=hy
13. Տ՛ես ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշում, https://www.arlis.am/
14. Տ՛ես ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 650-Լ որոշման հավելված 1-ը, https://www.arlis.am/
15. Տ՛ես Հաստատված ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով, http://mil.am/files/LIBRARY/7-amya/cragir/ՀՀ/ԶՈՒ/2018-2024/թվականների/արդիականացման/ծրագիր.pdf
16. Տ՛ես ՀՀ Նախագահի 2017 թվականի հունվարի 31-ի «Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-15-Ն կարգադրությունը, https://www.arlis.am/
17. Տ՛ես Фатеев К.В., Правовое регулирование обеспечения военной безопасности Российской Федерации. Дисс.докт. юрид наук. Москва, 2005, էջ. 39-40

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ռազմական քաղաքականության հայեցակարգային կարգավորումների առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Նորայր Նորիկյան

Հարավային Կովկասի տարածաշրջանում տիրող լարված ռազմաքաղաքական իրադրությունը, հարևան պետության պարբերական սադրիչ հարձակումները պահանջում են մշտական զգոնություն, մարտական պատրաստության պահպանում բարձր մակարդակում՝ զրկելով «փորձի ու սխալի» մեթոդի կիրառման հնարավորությունից: Հայեցակարգային հիմքերի վերլուծության համատեքստում հոդվածագիրը եզրակացնում է, որ ռազմաքաղաքական բարեփոխումների արդյունավետությունը կախված է պաշտպանական բնագավառում դիտարկվող, միմյանց հետ փոխկապակցված և հաջորդականություն պայմանավորող խնդիրների ու բացթողումների նախանշումից, լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրավորումից և դրանց հաջող իրականացումից:

РЕЗЮМЕ

Особенности концептуальных положений военной политики в Республике Армения

Норайр Норикян

Ключевые слова: военная политика, безопасность, вооруженные силы, реформы, военные действия, система управления, боеспособность.

Напряженная военно-политическая ситуация на Южном Кавказе, многократные провокационные нападения соседнего государства требуют постоянной бдительности, высокого уровня боевой подготовки и исключения метода «попытки и ошибки». В контексте анализа концептуальных основ автором делается вывод, что эффективность военно-политических реформ зависит от выделения существующих в этой сфере взаимосвязанных и последовательно сменяющихся проблем и задач, и планирования мероприятий, направленных на их решение и успешное осуществление этих программ.

SUMMARY

The Features of Conceptual Provisions of Military Policy in the Republic of Armenia

Norayr Norikyan

Keywords: defense policy, security, armed forces, reforms, war, management system, combat readiness

The tense military and political situation in the South Caucasus and the repeated provocative attacks of the neighboring state require constant vigilance and a high level of combat training, making it impossible to use the "trial and error" method. In the context of the analysis of the conceptual framework, the author concludes that the effectiveness of military and political reforms depends on the identification of interrelated and progressive problems and shortcomings observed in the defense sphere, the programming of activities aimed at solving these problems, and the successful implementation of these programs.